Հաստատված է հիմնադրամի հոգաբարձուների
Խորհրդի 15.02.2013թ.թիվ 19 որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ուրբան »Կայուն զարգացման հիմնադրամի 2012թ. Գործունեության մասին

1.Հիմնադրամի լրիվ անվանումը՝ *«Ուրբան » Կայուն զարգացման հիմնադրամ*
1.1. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական գրանցման պետական ռեգիստրի կողմից գրանցման վկայական *թիվ 03Ա064891*
1.2. *28.04.2004թ.*
1.3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ *Երեւան, Ալեք Մանուկյան 9*
1.4. Հեռախոս՝ *010-51-20-70; 010-51-20-72*, Ֆաքս՝ *010-51-20-76*
1.5. *094-62-83-38*
1.6. Կայք՝ *www.urbanfoundation.am*
1.7. էլ. Փոստ՝ *ufsd@aua.am*
2.Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավար Նունե Ղազախեցյան՝աշխատավարձ-3990206
3.Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ Արմինե Թուխիկյան, Արմեն Կարոսյան, Հայաստան Ստեփանյան, Սաշուր Քալաշյան, Չարլզ Սփեքթ-չեն օգտվել հիմնադրամի միջոցներից:
4.Աշխատակազմի աշխատավարձը՝ 23367814դրամ

5. Իրականացված ծրագրերը՝ *Բնապահպանական եւ կրթական -82908000 դրամ*
6. Ֆինանսավորման աղբյուրները՝

6.1. *Մոսկվայում Նորվեգիայի թագավորության դեսպանատուն*	*21259136*
6.2. *Բաունթերփարթ ինտերնեշնլ*	*4024500*
6.3. *Բրիտանական Դեսպանատուն*	*9673231*
6.4. *Ամերիկյան Դեսպանատուն*	*3930486*
6.5. *Չի-Ի-էս-Պի կազմակերպություն*	*3910200*

7.Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	*82908000*
7.1. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	*82908000*

8. *Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացրել է «Թրաստ Աուդիտ» ՓԲԸ-ի աուդիտոր Անահիտ Մուսաելյանը;*

9. *Աուդիտորական եզրակացությունը՝ 2 էջից;*

10.«ՈՒՐԲԱՆ» ԿԶՀ տնօրեն

Նունե Ղազախեցյան

11.«ՈՒՐԲԱՆ» ԿԶՀ հաշվապահ

Կարինե Ղարիբյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՈՒՐԲԱՆ» Կայուն Զարգացման
Հիմնադրամի ղեկավարությանը

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՈՒՐԲԱՆ» Կայուն Զարգացման Հիմնադրամի (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2012թ., հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական հոսքերի հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվություն

Նշված ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար պատասխանատվությունը կրում է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտներին եւ գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կառավարության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ առ 31-ը դեկտեմբերի 2012թ., ինչպես նաեւ նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ
տնօրեն Հայկ Մարգարյան

Աուդիտի ղեկավար
Անահիտ Մուսաելյան

21 մարտի 2013թ
Երևան